գեստներովը կեաղտիակից [1]) մինչև պուճուճակ [2]) սափրած գլուխներով, իւրեանց առտնին սովորու. թիւններովը բոլորովին թաթարներից չեն զանազանվում։ Մատնում է միայն հայերէն լեզուն և փոքր ի շատ է տիպը։ Մի եկեղեցի ունին Կարմիր Վարդանայ յիշատակին կառուցած, ուր մի քահանայ կատարում է կրօնական ծէսերը, միևնոյն քահանան նաև կարդալ գրել է սորվեցնում մանուկներին։ Ժողովրդի մեծ մասը արհեստներով են պարապած, որոնք ձանձրացած են խաներին ձրիապէս աշխատելուց։ Մի քանի հոգի միայն Կարնոյ հետ առևտրական յարաբերութիւն ունին, ուր փոխում են Եւրոպական ապարանքների հետ տեղական գորգեր, Կապերտներ, մազեղէններ և բամբակ։

Այս կողմերը քաղաք չը լինելու պատճառաւ Մագուն քաղաք է յիշվում բայց նորա բնակիչները գիւղացիներից այնքան զանազանվում չեն. նորանք մինչև անգամ գիւղացուն հարստահարելու հմտութեան չեն հասել։ Հին բնակիչներից ոչ ոք չէ մնացել. այժմեան սերունդը Բայազիդից և Տաճկա-Հայաստանի զանազան տեղերից ժողովված մի հաւաքածու է։ Աղատ են ամեն տեսակ հարկերից, բայց պարտաւորված

---

1) Կեաղտիկ—темя. 2) պուճուճակ—затылокъ: Վանեցոց բարբառ ից: